զփող խարձին մեր, և նոքա եղին ի վերայ զուր, քանզի անաստուածք են, և չարաճճի Հոռոմք ասեն թէ Զմանկունս մեր արգելեալ էք ի խուցս ձեր յառաւօտէ մինչ յերեկուն եւ պղծեալ էք զնոսա. ի դատաւորս եւ ի բռնաւորս տանիմք զերիցունդ. եւ Տէրտէրն իմ անց ընդ (բաշ մը էտրաժ) և ոչ խօսեցաւ:

Մայիս ամիս օր Բշի. տօնանման եղաւ:

Դշի օրս (3 Մայիս) *Յովսէփն և Տէր Յովաննէս և Բարսեղն եկին յէջմիածնայ:*

Եշի (4 Մայիս) *Համբարձում Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ օրս ի յԱստուածածին գնացի տեսանել զեկեալսն յէջմիածնայ*[1])*:*

Է–ին՝ օր Կիրակի Մեծահրաշի:

Դշի (10 Մայիս)*. մեր տան մեծ պատի հիմն ձգեցին:*

Եւ այգուցս (11 Մայիս) *կոչնական եղաք վասն հարսանեաց ի փուռս քաղաքիս և դրսին:*

Եւ Շաբաթ (13 Մայիս) *ի խանութս չուրջ եկաք:*

ԻԱ–ին Կիրակի. պատրաստութիւն հարսանեաց(*) *և կէս աւուրս զնշանն աւրհնեցին*[2]) *քահանայք մեր հանդերձ վարդապետօք ի Սուրբ Նիկողոս և վարդապետն բազում պատուէրս ետ նոցա ահացուցանելով թէ Կոխւ և մի խօսս ոչ առնելով՝ խաղաղութեամբ տարջիք զհարկն ձեր, որպէս սովոր են ոմանք առնել աղմուկս և կռիւս ընդ միմեանս փոքր ինչ իրաց: Եւ էր անձրև մեղմագոյն: Ը օր է ի Սուրբ Հոգոյ գալստեան և յի–*

1) *յէջմիածնոյ.* 2) *աւրհնեաց.*

(*) *Երեմիա Չէլէպի թէև որոշ չի գրեր՝ բայց հաւանաբար իր իսկ պսակի նկարագրութիւնը կ'ընէ այստեղ. հետեւապէս ան կ'ամուսնանայ* 1654 *Մայիս* 22*ին Երկուշաբթի, նոր թեւակոխած իր կեանքի* 18*րդ տարին, ծնած ըլլալով* 1637 *Մայիս* 13*ին:*